



**ԱՂՈԹՔ Ս. ԵՂԻԾԵ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ՔՐԻՍՏՈՍԻ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (ՎԱՐԴԱՎԱՐԻ)
ՏՈՆԻՆ ԱՌԹԻՎ***

(Ուղղված առ Որդին Աստված)

Օրհնյալ ես, Տեր Աստված ամենակալ, Որդի և Բանդ Աստված, Հորը Էակիցն ու արարչակիցը, գոյակիցն ու քնութենակիցը և Հոգիիդ, և անբաժան՝ Էական քնութենելոյ:

* Հայց. Եկեղեցվոյ Ծաշոց գիրքը բացի աստվածաշնչական ընթերցվածներէ կպարունակէն նաև շատ մը երկարաշոն «Մեծ աղոթքներ»: Այս Բոյակապ աղոթքները առնասարակ գոված են մեծ տոնելու աղոթիկ ընթանական Եկեղեցի և Հայց. Եկեղեցվոյ հոգեշունչ հայրապետներու և վարդապետներու կողման: Ասմեն մեր տվյուրական Բակացողությամբ աղոթքներ չեն, այլ աստվածաբանական տարողությամբ և ս. գոյական հարատարթյամբ աղոթաճն ընդարձակ ճառեր են առնասարակ. անոնց երկայնամիտ և տրամադիր ընթերցումը կամ ունկնդրությունը թէ՝ հոգին կմիջթարեն և թէ՝ միտքը կսնուցանն: Այս Բոյակապ աղոթքներոյ բարիքին Բաղրոդ դարձնելու համար նաև աշխարհիկ Բավատացյալները տակավ առ տակավ պիտի Բարատարակներ զանոնք պաշտոնթիրին մեջ, աշխարհարար լեզվով:

Սոյն աղոթքը և Բառաշիկային Բարատարակվելիքներն շատերը բարգմանված են ս. Աթոռուս երանաշնորհ տ. Մեարու պատրիարքի կողմեն, որ, Բամաձայն իր պահպանողական ոգիին, ոչ միայն Բավատարմորեն պահպանած է անոնց բնագրային Բա-

Անալլայլելի, անփոփոխելի, անահմանելի, անպարագրելի, անհասանելի, անըմրնելի, անսկիզբն, անժամանակ, անմահ, անհմանալի, անճառելի, անպատմելի, անբավելի, անթարգմանելի ծնունդ և ծոցածին Որդի, Հոր ասհմանավլորումը ու Բանը, և փառակիցը և Հոգվոյդ: Խմաստություն և գորություն, ճառագայթ և կերպարանք, Է-ությամբ զուգահավասար ու գործակից Հորը և ս. Հոգվոյդ. Երեք կատարյալ անձերեն մին և ս. Երրորդութենելոյ մեկ քնությունը կհանչցվիս: Հրեղեններեն ու հողեղեններեն կենտանիներու և մեռյալներու Աստվածն և Տերը ճանչցվեցար, աստվածներու Աստվածը, տերերու Տերը, որ դու միայն ես անմահ ու անմատուց լուսին մեջ կրնակիս:

բազատությունը այլ նաև պահած է աշխարհիկ լեզվի կրոնական բույրը, որ Բանախ կորումնու վտանգին կենթարկվի որիշ բարգմանություններու պարագային: Եթեն Տեր կամեցի, մոտադրություն կա Բառաշիկային այս բոլոր «Մեծ աղոթքները» և Ծառերը, Բարատարակել առանձին գրքովկով և ավելի մեծատառ, ի դյուրություն Եկեղեցվոյ պաշտոնակներու և ի հոգևոր վայելումն նայ Բավատացյալներու:

ԽՄԲ.

Որ լոկ խոսրովի ոչինչեն գոյացուցիքը բոլոր արարածները և Հոր Աստուծո հաճությամբ և ս. Հոգիիր գործակցությամբ արարագործեցիր երկինքն ու երկնայինները, երկիրը ու անոր մեջ բովանդակվածները: Ստեղծիչ լոյսի ու խավարի, և բովանդակիչ երևակներու և աներևույթներու: Երկինքը գոյացուցիք անձառապես, ամսի համանուշ լուծ ու բոլորակ, որ առագաստի պես տարածված է օդին մեջ ու կերպանակորեւ երկիրի վրա ամեն եղածները: Գոյացուցիք հան շուրջ երկինքին վերև**, որ կլուզի հաստատություն և որուն վրա կհանգչի անքածանելի և երրորդություն: Ու Բոն իրենց դասակարգության համաձայն կան անջիկ բազմանույն հրեշտակներ, որ երկինքը լեցուցած են, զորս տաեղնեցիր որպեսզի փառարանեն ամենասուրը երրորդություն: Եվ լուսավորները՝ իրեւ մասմիկ մը առաջին լոյսեն գոյացնելով՝ երկինքի ողորտին մեջ ամփոփեցիր, որպեսզի շարունակ ցոյց տան երկրին՝ զիրենք տաեղնողիդ խնամքը, առաջ բերելով եղանակներու շրջանները և ժամանակներու փոփոխությունները՝ արևի, լուսի և աստղերու միջոցավ: Հորինեցիր հան երկիրը իր հրաշալի տեսակավորությամբ, լեցուցեցիր զայն լեռներու, բլուրներով, դաշտերով, հեքենարու տունելերով ու զանազան բարիքներով, որպեսզի Բոն բնակին գագաններն ու անասունները, ստուններն ու ջոչունները ու անխափան վայելեն ինչ որ կմատակարարե երկիրը. և դու ես որ քաղցրությամբ կկերպիրեն ամենքը:

Ունայն ու թափուր շթողուցիք հան ծովերը, որ քո հրամանովի հաստատված են տեղ տեղ, զանոնք ալ լեցուցիք տեսակ տեսակ կենադանիներով, որպեսզի տերն ու արարիչը երկիր ամեն բանի և դատավորն ու դարմանիչը բոլոր մուս երկրածններուն վրա:

Ու այս ամենուն վրա տեր ու թագավոր դորի մարդը, զոր հողեն ատեղնեցիր կենադանի, փառազարդ և լուսազգյաց գեղով՝ երևելի և պայծառ տեսակով, ու շնորհնեցիր անորոց իշխանական պատկերը՝ իշխելու համար բոլոր մուս երկրածններուն վրա: Ու դորի զայն փափկության դրախտին մեջ, որ քո հրամանովի տնկենցավ տևական ու անթառամեկի՝ մարդուն վայելքին համար, որպեսզի անհիկա ապրի միշտ անմահ տուներուն մեջ, անմահությունը զգեցած, պայմանաւ որ պահն միայն բարիի և չարի գիտության ծառեն չուտելու պատվերը: Մար-

դուն տրված այս պատիվը ավելի սարսափելի ու սիրապի էր քան հրեշտակներուն: Ուստի քանարկուն սատանա նախանձեցավ այս պատկույն վրա, աև՛ որ հրեշտակական աստիճան ուներ այն առեն ու իր արժանիքն ավելի գերազանց փառքի և պայծառության մեջ կգտնվեր: Մտնելով այնուհետև իմաստուն գազանին (օձին) մեջ՝ անոր միջոցավ կիսուեր նախատղած կուպիսի հետ, որ անգիտակ էր անոր բնավորության, որպեսզի եվայի ձեռամբ, դդորությամբ խարեն իր գուգակիցը՝ Աղամը: Ու ճաշակել տալով անոնց արգիլած պտուղեն՝ դդորակ մերկացուց անոնցնետ աստվածահրաց զարդարաները, ստախոտությամբ խարելով զանոնք՝ թե աստվածներ պիտի ըլլաք ու պիտի ճանչեաք բարին ու չարը: Աստվածության շխատան, բայց բարին ու չարը ճանչցան ողորմելուները: Ու մերկանալով իրենց փառքեն և գրկելով անմահութենեն՝ խեղճ ու ողորմելի վիճակի մը ենթարկվեցան ու պատառտուն տերելով ծածկելով իրենց մերկությունը՝ ամենազան Արարիչիդ երեսն պահվըտի կուզեկին սահարթակիտ տունեկերու ներքն, ու պատճառաբերներ մերյուրելով կշանային արդարացնել իրենց մեջը: Այսուհետև արտաքսվեցան անմահական դրախտեն և տաժանելի և տարակուսելի կյանք մը սկսան վարել դդորաք, և հրաման ընդունեցան քո բարերարութենեղ տրտությամբ ծնի իրենց զավակները և երեսի քրիներով ուտել իրենց հացը և վերատի դառնալ հողին՝ ուրին ստեղծված էին: Այս պատճառավ թագավորնեց մարդ մեր մարդկային բնության վրա՝ ծառայելով մահացու մեղքերու և հետևելով բանարկուին շարագործ կամքին՝ տեսակ տեսակ կուպաչտության մեջ ընկդմեց մարդիկը՝ մինչ այն աստիճան որ Արարիչիդ սորը անունը բարերու, փայտերու և մենելոց ուկորներուն վրա դրոշմեցին. Վասպենի Նախահնամողդ ստրացած մեկնեցավ մեր բնութենեն և մարդոց որդիները գրավելով դժոխքն՝ մահվան ստվերներու մեջը հստան:

Այս խանդադատեցար քո արարչական գթությունով՝ երբ մեղքի կապանքներով պարավանդպած տեսար քո անարատ ձեռքիդ ստեղծվածը ու անտես չըրի զայն, այլ նախահնամական սիրով այցելեցիք անոր երևելով դարերու և ժամանակներու մեջ:

Տվիր օրենքներ, դրեցիք մարգարեներ, որոնք կանուին ավելուարանեցին մեր մարդկային բնության քո խոնարիիդ: Եվ որովհետև հուզ կարևեր խոցված էինք բանարկուն, այդ պատճառավ ոչ օրենքները կրցան մեր մարդ-

** Այս և վերևի տողեր ակնարկություններ են Աստվածառնի Ա. 6—8 համարներուն որուն համաձայն երկինքի կապուտն ալ համատարած «ջուր» կիարձվեր:

կային բնությունը փրկել մահվան գործոքեննեն, ուստի մարդանալող և մեռնելու կարուտացանք:

Եվ դարձալ՝ որովհետև հովֆ ողորմած ես և մարդաւեր, երկայնամիտ և քաղցր՝ բնավ աստվածության մեջ չխողուցիր մեր բնությունը. մեր մեղքերուն և անօրեության համաստ հատուցում չըրիր մեզի. այլ խոհարհեցնելով երկինքը՝ Հորը առաքմամբ և ս. Հոգիիդ հաճությամբ ամենօրհնյալ Մարիամ կույսի անարատ արգանդը հօար: Ու անխանելի աստվածությունն նոր խառնումով մեր բնության հետ միացուցիր, և անշշափելի էությունն մարմինի մեջ թանձրացնելով՝ Աստուծն Որդիդ եղար կույսի որդի: Եվ դու որ անձամանակ ես՝ անրմունելի տնօրենությամբ ինն ամիս բովանդակվեցար ս. կույսի արգանդին մեջ: Այնուհետև ծնար անձանապես ամենօրհնյալ Աստվածածիննեն. ծնո՞ւնդ սուր և գերծ որևէ ախտե, որ քո աստվածության միայն գիտելի է և մարդոց անհասանելի: Ու տղայական կերպարներով ամենասուրը կույսին գիրկը բազմեցար ու անոր կուսական կաթովը սրնար: Ծնար մանուկի նման և մինչև արբունիքի հասնիդ մարդոց հետ շրջեցար՝ անոնց մեջուն նման: Երեսուն տարեկանիդ Հորդանան եկար, ո՞վ դու Գառն Աստուծո, որ աշխարհի մեջը կրառնաս, կատարյալ հասակով, աղամային մարմինով, որպեսզի լվա ու մաքրեն Աղամի փտած ու նեխած վերքերը: Մկրտվեցար Հորդանանի մեջ ամլորդի Հովհաննեսն և քո գոյակից Հորմեղ վկայվեցար որդի սիրելի և Աստված կատարյալ: Եվ ս. Հոգին, որ անմենելի է քենե, աղամակերպ իշնելով վրայ, հոն ներկա եղողներուն հայտնեց զեկ կատարյալ Աստված՝ եկած կորաված մարդկային ազգ փետքերու: Վասնզի անոնց՝ որ վերատին կծնին կենդանի ջորին, որ որ քո աստվածախառն մարմինդ թաղվեցավ մկրտությամբ, մինևոյն կատարյալ շնորհաց Հոգին կորկես աներեւոյթ տեսլամբ՝ որպեսզի վերատին ծնելով՝ ըլլանք Աստուծո որդիներ և ժառանգակիցներ և մարմնակիցները քո աստվածության: Այնուհետև վասար գործքով ու խոսքով ավանդել մեր փորկության ավետարանը ու սորվեցուցիր մեզ ընդդիմանալ չար դնին հնարքներուն, որ մաքառեցավ քեզ հետ՝ մկրտութենեն վերջը, որպեսզի ինք որ Աղամին հետ կուվեցավ հառաջագույն՝ պարտվի Աստուծուդ ու անոնց մե՝ որոնց վրա քո սուրը անուն է կոչված. վասնզի դուն որ անձիդ փորձով կրեցիր այս ամենը՝ կարող ես օգնական ըլլալ մեզի, փորձության ենթականերուս:

Եարդկային կերպարանքով շրջեցար երկրի վրա և ճշմարիտ մարմնազգեցությամբ սարդկային կիրքերը ամբողջովին վրայ կրեցիր՝ բացի մեղքե, ու հայտնեցիր քո աստվածահրաշ զորությունն ամստածեատներուն և իշխանական վարդապետությունովիդ շատերը քեզի աշակերտեցիր:

Ապա եկար հայտնելու քո աստվածային կերպարանքը, և ինչ որ գոնե ընդ աղոտ տեսմել կցանկային հրեշտակները՝ այսօր մարմինիդ վրա երկացուցիր աշակերտներուդ Թարոր լեռն բարձունքը: Հետդ առիդ աշակերտներեղ Պետրոսը՝ եկեղեցվո վեմը, որուն արջայության փականքները խոստացար, և երկու եղբայրները՝ Հակոբոսը և քո սիրելին Հովհաննեսը, որոնք մահվան բաժակը քեզ հետ ըմբեկով խոստացան. մեկուսացուցիր զանոնք մարդոց բազմութենեն՝ հետդ տանելով Թարոր լեռը, որպեսզի անոնք, որոնց արջայությանդ տեսությունը խոստացար, քո մարմինիդ վրա տեսնեն Աղամի առաջին փառքին պայծառությունը, որը մերկացուցած էր անկե բանարկուն, ու իրենց միտքերեն փարատին քո մահվանդ մասին իրենց ունեցած կասկածն ու երկուու:

Կվկայեին հոն Մովսես ու Եղիա մարգարեները քեզ հետ երևանալով քո փառքիդ մեջ ու կիսունենի Երուսաղեմի մեջ կրելիք շարշարանքներուդ մասին, որովհետև դուն կենդաներու և մեղյաններու տերն ըլլալով հանդերձ ամոթ շիամարեցար քեզ իաշի կամավոր մահը:

Կարծյալ պյուները զարհութեցան փայլակացացյալ ճառագայթներեղ և խոր թմրություն մը տիրեց իրենց վրա ու գետին տապալեցան, վասնզի շտեաս քեզ այնան ինչպես էիր առաջ, այլ մինչ աղոթքի կեցած էիր՝ ահագնակերպ ու ճառագայթան նշովներ այնպես պատեցին քո անձդ որ խափանեցին արկին ճառագայթները. ու աշակերտներդ, որոնց անձանոթ էին գլխավոր մարգարեները, տեսան զանոնք՝ որ կապասավորենին քո փառքիդ ու կիսունեն քեզ հետ: Եվ մինչդեռ մտախոհ ու տարակուսով կեցած էին անշշունչ՝ աստվածային թերարաց փառքիդ առջն՝ հանկարծ լուսավոր ամառ գալով՝ կիրկանավորեր զանոնք. ու կամեր Հայրական ձալնը որ ինչպես ի Հորդանան՝ հոս ալ կվկայեր քո մասիդ. Դա է որդի իմ սիրելի: Ապա աշակերտները դողալով Հայրական ձալնեն՝ սաստիկ երկուու մը կրեցին, այն սաստիճան՝ որ չին զգար իրենց կենդանի ըլլալը և եթե ամենակարող զորությունն չպահեր զանոնք, որպեսզի մոռացության շորվի աստվածահրաշ

այս տեսիլը, ավելի մեռյալ կլինիկին քանի կհնաբանի:

Մինչդեռ մարգարեները քեզ մետ հաշովելով՝ Երրորդության երեք անձերու խորհրդ կհայտնելի, Պետրոս՝ իր զարհութանքին մեջ՝ տաղավարաշնուրված մասին կխոսեր: Նմանապես երրակ թիվը աշակերտներու, որոնք քեզի մետ էին սուրբ լեռան վրա, Երրորդությանց օրինակը կը հայտնաբերեր, որպեսզի այս երեք կերպավորյազ գաղափարներով հաստատի և Երրորդության անբաժանելի անձնավորությունը:

Սրդ՝ օրինյալ է քու փառքի, Տեր Աստված մեր, այդ սրբավայրի մեջ, դու որ օրենքներն ու մարգարենությունները ամրողացնելու համար եկար, ու եղար այդ լեռան բարձութը, ո՞վ ավետարանիչ Սիոնի: Վասնզի քունի են երկինքն ու բարձունքները. աշխարհը իր ամրողությամբ դուն արարչագործեցիր, ծովն ու ցամաքը դուն ստեղծեցիր. Թաքոր և Հերմոն քու անունով պիտի ցնան:

Այսօր իսկապես կցնծա Թաքոր՝ տեսնելով իր վրա Երրորդության միության հրաշքը: Այսօր Սիոնայն ավելի կպանծա Թաքոր լեռը. վասնզի հոն ամպ, մեզ, խալար, մասուխուղ, ծովս ու հոր կարտակն ու անարժաններու ուռեղը կարգիլվելին ելլել այնտեղ: Իսկ սա զքեզ՝ մարմնացյալ Բանդ՝ ճառագայլարձակ կերպով կհայտնեն աշակերտներու, և Հոր Աստված ավետավոր ձայնը բոլոր որդիացյալներուն կինչեցնեն լուսավոր ամպին մեջեն, որ հառաջիկային արդարներուն համար է պատրաստված: Պատրաստված է ան այնպես իբրև ճանապարհ և վերելք այն ամեն մեղավորներուն՝ որոնք քու լուսավոր հրամաններու կինտնելին: Վասնզի անոնք որ այսօր չերմեռան սիրով ու հավատով սուրբ լեռան կմոտենան, ոյուրազ երկրավոր ցածութենեն երկնային բարձունքները կողևորին:

Ծվ արդ, բարերար և քաղցր Տեր, անխակալ և բազումողորմ, հաշու և բաց աշքով նայե՛ պատրաստ բնակութենեն այս ծողովորոյի, որոնք քու ուռեղերու հետքերուն հետևեցան՝ հանդիպելու համար քեզ սուրբ լեռան վրա և երկրավագելու համար քեզ այնտեղ, որ կեցան քու ուռեղեր: Թողովոյն տուր կամա և ակամա, գիտությամբ ու անգիտությամբ գործած ասոնց մեղքերուն: Ընորին ասոնց սուրբ սիրու և անզքաղ խորհուրդ և զգաստ միտք: Հանե՛ բարերեն սիրու և տուր ասոնց մարմնելին սիրու տուր նաև քու սուրբ հոգին՝ հեռացնելով ամեն չափիներն ու մոտեցնելով բարի գործերու, որպեսզի չհեռանանք ամորթալից, այլ մաքավորին նման արդարացած իշնենք (տաճարեն): Պարգևն նաև մեզի բարի

թեսն ի գորություն և ժամանել աստվածային այս սուներեն դեպի (Երկնային) անվախճան սունախամբությունը:

Ցողե՛, Տեր, Սիոնի վրա Հերմոնի ցողը՝ տաղով ասոնց հանցանաց թողություն:

Մենք թեն օրեւ օր շատցոցինք մեր մեղքերը, բայց դու մեր մեղքերուն համեմատ մի՛ դատեր և մեր անօրենության համեմատ մի՛ հատուցաներ մեզ:

Մենք կավ ենք և դու մեր արարիչը, ու ամենք քու ձեռագործներդ:

Մեղանչեցինք, անօրինեցանք, հանցանք գործեցինք ու խոտորեցոցինք մեր ուռեղերը քու շավիլներեն. խատցոցինք մեր սիրութերը՝ քեզմե չվախնալու աստիճան: Դարձի՛ր, Տեր, քու մեծագույն փառքի համար. գուցե մենք չկարենանք ծառանձել քու սուրբ լուսդ: Չունինք մենք մեզ ապավեն, բացի քեզմե, որ արդար ես և անարատ և քալիչը մեր մեղքերուն: Մի՛ իսպան բարկանար և մի՛ ձեռքե ձգեր այս քու բանավոր հոտդ, որ քու սուրբ արյունի գինն է և զոր սեփական ծողովուրդ ըրի քեզ:

Մենք մեր գործերով բարկացոցինք քու սուրբ անուն, այդ պատճառավ արագապես մեր վրա հասան տեսակ տեսակ հարվածներ՝ սով, սուր, գերություն, նեղություն, դիվական հարվածներ, հիվանդություններ ու պես պես ցավեր և տաճանելի անխսիր, վիշտ երկինքեն, վիշտ երկրեն, մահ տարածամ, խոռվախուզ ամպ և օդ, որոնք կամ կիսավին բարկությամբ և կամ կրացվին սաստկությամբ, և պես պես պատահաներու մարդոց, անասուններու և մեր արտերուն վրա, և մենք ուռփ կիսան եղանք անոնց որոնք չեն կարդար քու սուրբ անուն:

Սակայն, ո՞վ դու անխակալ և մարդասեր Տեր, թեպես մենք մեղանչեցինք, բայց քեզի հնկանք ավազանի արգանեն և չունինք ուրիշ Աստված բացի քեզն:

Դու ես մեր հայրը, տեսուչը և հովիլը. մեզի դարձի՛ր, ով մեր Աստվածն ու Փրկիչը, և հեռացն' ու մենք քու բարկությունն: Չըլլա որ մեր գործերուն համեմատ հատուցում ընեւ մեզի, վասնզի մենք շարունակ ապականչեցինք մեր ճամփաները մեր չար գործերով: Ծվ որովհետև դու միայն իշխանություն ունիս թողով մեղքերը, հեռացնել մեզմե ախտերն ու հիվանդությունները, հարվածներն ու մեղքի հետևանք եղող ցավերը, այդ պատճառավ քեզի կոհմենք միշտ: Մեղանչեցինք երկինքի և քու առջն. Աստված, բավի՛ մեզ մեղավորներս: Բա՛ց մեզի քու ողորմության դուրս՝ օրվան շնորհիվ, որպեսզի չհեռանանք ամորթալից, այլ մաքավորին նման արդարացած իշնենք (տաճարեն): Պարգևն նաև մեզի բարի

վարձք քու սուրբերող հետ, որոնք սկիզբն էածնացան քեզի՝ Փրկչի և մեր Աստվածութեն, որպեսզի ամոնց հետ միասին արժանաւանք փառավորել ահավոր ու քաղցր անոնի՝ Հոր և ս. Հոգվոյդ հետ, այժմ և միշտ և հավիտյան։ ամեն։

Խաղաղություն ամենեցուն։

Առավելապես գոհություն կմատուցանենք ու կերկրապագենք քեզի, Քրիստո Աստված մեր անշեշ ճառագայթ, որ աստվածության լուսը կծագեն քո կամքը կատարողներուն և անոնդ փառավորողներու սիրտերուն մեջ։ Որ անտեսելով հան մեր անարժանությունը՝ արժանացուցիր հասնի այս մեծահրաշ օրվան պայծառության՝ տոնակից ըլլարու տոնասեր ու աստվածասեր անձերուն։ մանավանդ այն սուրբ հայրերուն, Թարոր լեռան վրա պահապանեներն և սպասավորներն են քո սրբավայրիդ, որպեսզի ամոնց աղոթքով ու բարեխտությամբ ողորմիս մեզի։ Մենք հավատացյալներու ալ ամոնց նմանելով կտոռնենք, ոչ թե հին մովսիսական տվյալներով վկայության խորանին համաձայն, զոր բեսենին շինեց և Մովսես կանգնեց ու ավանդեց իսրայելացիներուն տաղավարահարաց տոն կատարել, որպեսզի անշինչ մնա հիշատակը խորանին, որ ամոնց հետ Կշրջեր անապատին մեջ և զոր քու ցուց տված օրինակեն առավ Մովսես և տվալ Հին Ուխտի եկեղեցին իջրև (ասվերական) օրինակ։

Այլ մենք կկատարենք պայծառակերպության տոնը, զոր ցուց տվիր ընտրյալներուն սուրբ լեռան վրա, և կամավոր խաչելութենեղ, կենդանի մեռելութենեղ, փրկագործ ու կենդանաբար հարութենեղ և ս. Հոգվոյդ առաքյալներուն վրա իջնենեն հետո՝ ավելի սարսափելի ու սիրալի երկուցիցի այսօրվան լուսափայությունը, և, լուսի աղբյուր, ողորմության կրանքի և փրկության դուռ բացիր զայն մեզի, հինը նորին և ըստվերը ճշմարտության փոխելով, և ս. Հոգիի միջոցավ սուրբ առաքյալներուն հայտներով։ Փոխանակ տաղավարական հին խորանին՝ քու եկեղեցի խորան շնորհեցիր՝ շինելով զայն ստաքելական և մարդաբեական վեմին վրա, որուն անկյունաքարը դու ինքը եղար իջար իջրև վեմ պատվական և անշարժելի։ Եվ քավության մեղանին տեղ, որ անսուներու արյունը կմատուցվեր, սրբարար մեղանը հաստատեցիր, որուն վրա Աստուծության գառնդ կպատարագվիս ու աշխարհի մեղքերը կրառնաւ։ Եվ փոխանակ ստվերակերպ քահանայության՝ քու ճշմարիտ քահանայությունդ շնորհեցիր մեզի։ Նոր ժողովուրդիդ վերակացու և առաջնորդ-

ընտրեցիր երանելի Հակոբոսը՝ ըստ մարմնու եղբայր, որ այսօր ձեռնադրվեցավ սուրբ լուսերեն, անոնց որոնք քու ամենասուրբ աշեղ ընդունած էին իրենց ձեռնադրությունը։ Այսօր պատարագվեցար նոր դաստակերսի աստվածարայ նորագուտ սեղանին վրա, որ սուրբավայները հայտնապես կտեսեին ս. Հոգիի աղավնակերպ իշած սուրբ սեղանին ու հոն պատարագայիդ Վոր՝ որ աներածան է քեզմի։ Այս ավետարեր օրը ցուց տվիր սկզբան ուստերուն և պատարագմերուն։ վասնզի նոր էր սեղանը, նոր՝ պատարագը և նոր՝ պատարագվեցար նորոգություն տվող այս օրվան մեջ։

Օրինության աղը հաստատեցիր մեր մեջ, այսինքն՝ ս. Հոգվոյդ ճշմարիտ շնորհը, զոր տվիր բժշկելու համար մեր նեխածությունը, ու ամեն շնորհեցիր՝ ինչպես ի հնումն՝ նոյնական ներկայի զարդարեցիր այս օրու միննոյն կերպարանքով հարութենեղ վերջ երևաց առաքյալներուն Գալիլիայի մեջ։ Վասնզի անոնք որ ականատես չէին եղած այսօրվան հրաշքի՝ կակածի մեջ ինկան, և մրու անգամ գալատյանդ օրը նոյն կերպարանքով պիտի երևիս անոնց՝ որոնք քեզ սիրեցին, որպեսզի նոյն ողջովնը և նոյն խաղաղությունը բնորունին քեզմի։

Եվ արդ, ո՞վ մեր Տերն ու Աստվածը, դուն որ բարիքներ կպարգնեն և առան ողորմություն կշնորհեն, տո՞ւ հիմակ ալ վերադիտող քահանաներուն՝ առանց նենգության, հասակ հավաքածով, սուրբ սիրտով, հաստատուն հավատքով ու աներկրա հուսով սպասավորել քու սրբարար սեղանին և հաշտարար ու մեղաքավիչ մարմնոյդ և արյանդ հաղորդվիլ ու արժանապես հաղորդել զայն նորածնակ զոր ժողովուրդիդ, և սրբությամբ ու արդարությամբ հովվել քու հոսդ, զոր սուրբ արյունուղ գնեցիր։ Դապար վայրերու մեջ բնակեցնել զայն և հանգատավետ շուրերու մոտ սեղուցնել։

Տեր իմ Հիսուս Քրիստո, մի՛ նայիր իմ անարժանության, որ հիմա մեղապարտ անձովս ու ամորթալից երեսով կեցած եմ քու առջնուն։ Դուն գիտես իմ հանցանքներս, դուն՝ որ կընեն սիրտերն ու երիկամունքները, և ես իմ մեղքերուն բազմությունը չեմ կրնար ծածկել քեզմի։

Կաղաչեմ քեզի, մարդասեր և քաղցր Տեր, ցուց տուր մեզի քու մարդասիրությունդ և օրվան շնորհիվ պարգնեն՝ մեղաց ժողություն, հոգեկան ու մարմնական զգաստություն և սրբություն ինձ և համայն ժողովրդյան և բոլոր հավատացյալներուն՝ կենդանիներուն և հանգուցալներուն։

Կաղաչեմ քեզի, Տեր բարերար, բարեխո-

սությամբ անարատ ծնողի և Աստվածածնին և Հովհաննեն Կարապետին և ս. Ստեփանոսի հախավկային և սուրբ առաքյալներուն և երեք աշակերտներուն, որոնք քեզ են էին սուրբ իերան վրա, և գիտավոր մարգարեաներուն՝ Մովսեսին ու Եղիային և բոլոր սուրբ վկաներուն, նաև ս. Հակոբ առաքյալին՝ Երուսաղեմի տաշխն հայրապետին՝ օրինե քո այս ժողովուրդի, սուրբ առաջարանուները և ի բարին կատարե մեր խնդրվածները։ Հաստատե կաթողիկե եկեղեցի համեմերձ իր ուխտով, անշարժ ու անվետ պահեղով զայն հակառակորդներեն։ Ու անոր քահանայապետական դիրքն ու վարդապետական շնորհը՝ իր պայծառացյալ մանուկներով՝ սուրբ եկեղեցիի հաստատուն վեմին վրա հրաշանորոգ ու անաղարտ պահե ամեն երևելի ու աներևույթ փորձություններեն։ Եվ սուրբ ու պատվական խաչի զորությամբ, որուն վրա արյունահոս գամեցցար ամենակենայի բնեռումով, պարսպայլ պահե անոր հովանելին տակ բոլոր քեզ հավատացողները ըստ կարգի և ըստ աստիճանի. եսիսկապուները, երեցները, սարկավագները և համորեն ուխտը սուրբ եկեղեցիի և սուրբ ամենուն բարեկարգ կյանքի փափագը։

Թագավորները, իշխանները և իրենց զորքերը ամրացն' իր սուրբ խաչի զորությունով, որպեսզի հաղող ըլլան պատերազմներու մեջ և սուրբ ուխտի թշնամիները կարեցն' և հնագանեցուր անոնց ուրքերուն տակ։

Միանալ ճգնավորները պարսպայլ պահե թշնամիին ամեն ծովակներեն՝ մինչև վերջ անասաւ և անարատ վարքով։

Ամուսնացալները սրբությամբ և արդարությամբ պահե, Տե՛ր, որպեսզի հոգևոր սիրով ապրին միմյանց հետ, ու անոնց զավակները քո երկուուի և սիրով մեջ անցուր գերծ պահեղով զանոնք տղայական պատահարներեն։

Զգաստության հոգի շնորհե ծերերուն՝ որ հիշեն միշտ իրենց վախճանն ու աշխարհն (մոտալու) հրաժարում։

Պահպանն ամենքը սուրբ խաչով և օրվան շնորհիվ, հեռափորներն ու մերձավորները և զանոնք՝ որ ծովու և ցամաքի վրա կճամփորդեն ու տեսակ տեսակ վտանգներու, ցավերու և նեղությանց մեջ կգտնվին։

Շնորհե՛, Տե՛ր, գերյալներուն՝ դպրձ, բանտարկյալներուն ու կապալպներուն՝ արձակում, մեղքերու՝ լուծում, դևերու՝ հապածուն և քիստունեից պատերազմներուն՝ հաղթություն։

Կարկե՛, Տե՛ր, եերձվածողներու քերանը, մարե և լուցուր օստար թշնամիներեւ առաջած խովությունները։ Դիտապատ կործանեւ սուրբ եկեղեցիի վրա հարձակողները։

Պահե, ո՞վ Տե՛ր, քո այս բանավոր հոտոցազաններեն, սողուններեն, թունավոր ճճներեն, գլորումեն, ընկդումունեն, հրկիզութենեն, շրամենդութենեն, սատնամանիքներեն, ավագակներեն, խորչակեն, ուժգին հովերեն ու ամեն վնասակար տաքրերեն, քանզի բոլոր արարածները քո հրամանի կիմազանդին։

Օրինե՛, Տե՛ր, եերկա տարիս և անոր պըտունները՝ անփեղ պահեղով ամեն պատահարներեն, և քո աջ մեր վրա թող լինի տարվուս սկզբեն մինչև վախճանը։

Ցուց տո՛ւ, Տե՛ր, օրվան շնորհը մարդոց և անաստիններու, կենանենիներու և անկենդանիներու վրա, ամառերու, օդին, բույսերու և տունկերու վրա ու անվետ պահե զանոնք ամեն տեսակ աղետներեն ու փորձանքներեն, որոնք քո հրամանով կու գան մեր վրա։

Շնորհե՛ որ սիրով ու արդարությամբ և խաղաղությամբ վարենք մեր կյանքը և ուղղափառ դաշտավայր փակենք մեր վախճանը։

Հիշե՛ նաև ննջեցալները, որոնք ուղիղ խոստվանությամբ պարտեցին իրենց կյանքը. շնորհե անոնց հանգիստ՝ արդարուց կայսենին մեջ, և շնչե՛ կանա և ակամա, գիտությամբ և անգիտությամբ զործած իրենց բոլոր հանցանքներուն մորթակը։

Եվ քո հրաբորոք գալատյանդ վերջին օրը արժանացն' ամենք լուսեղեն ամպերու վրայեն թոշի քո առջևեն, Տե՛ր, և սուրբերու հետ Վերին Սիրենի մեջ հանդիպելով քեզ՝ եռակիուսակ սրբասացությունը երգել քեզ և Հորդ և ամենասուրը Հոգիվույտ՝ անհատնում օրինությամբ. Քեզ՝ որ օրինալ, գովյալ, բարեբանյալ և բարեհամբավյալ և առավելապես փառավորյալ ես երկնավորներեն և երկրավորներեն՝ այժմ և միշտ և հավիտյան հավիտնենից. ամեն։

(«Միան», 1957 թ., № 6, էջ 144):